Գաւառներ	Ընդհ. բնակչ.	Հայ. %	Մահմ. %	Այլք %
1. Քարվանս. գ.	74	61 — 83	9 — 11	4 — 5
2. Գանձակի գ.	114	67 — 59	29 — 25	18 — 16
3. Շուշիի գ.	214	150 — 70	58 — 27	5 — 3
4. Զանգեզ. գ.	127	88 — 69	38 — 30	1 — 1
Ընդամէնը	529	365 — 70	134 — 25	28 — 5

ողջ նահանգում, այնպէս նաեւ առանձին առանձին գաւառներում*):

Ամփոփելով այս թիւերը տեսնում ենք ուրեմն, որ նախագծուած երեք փոքր նահանգներից բաղկանալիք Անդրկովկասեան Հայաստանը ունենալու էր 2 միլիոն 114 հազար բնակիչ, որից հայ՝ 1 միլիոն 298 հազար եւ կամ ամբողջ բնակչութեան մօտ 62 տոկոսը: Ինչ վերաբերում է հայկ. տերրիտորիայի գաւառական բաժանումներին, այդտեղ էլ հայութիւնը 15 գաւառներից 10-ում կազմելու էր բացարձակ մեծամասնութիւն, 2-ում՝ համեմատական մեծամասնութիւն, իսկ 3-ում — փոքրամասնութիւն:

Ինչ վերաբերում է սահմանորոշելիք Անդրկովկասեան Հայաստանի ամբողջական տերրիտորիային, մենք տեսանք արդէն, որ նա պիտի բաղկանար, նախկին բաժանումներով, Երեւանի ամբողջ նահանգից, Կարսի նահանգի համանուն եւ Կաղզուան գաւառներից (Օլթին եւ Արտահանը դուրս էին թողնում), Թիֆլիսի նահանգի մէջ մտնող Ախալքալաքի գաւառից եւ Բորչալու գաւառի մաս կազմող Լոռիից եւ, վերջապէս, Գանձակի (Ելիզաւէտպոլ) նահանգի Իջեւան, լեռնային Գանձակ, Շուշի եւ Զանգեզուր գաւառներից ու յարակից հայաբնակ վայրերից: Ուրիշ խօսքով՝ հայութեան անվիճելի տերիտորիա սեպուած — թէեւ, դարձեալ, ոչ անվերապահօրէն — Երեւանի նահանգին որպէս դարձեալ հայկ. տերրիտորիա պահանջում էր կցել հարեւան հայաբնակ շրջանները, որոնք այդ միջոցին վարչականօրէն կազմում էին Գանձակի եւ Թիֆլիսի նահանգի մասեր: Սրանք բոլորը, Երեւանի նահանգի հետ միասին, ներկայացնում էին մօտաւոր հաշուով 60–62 հազար քառակուսի ֆիլոմէթր տարածութիւն:

Ասել է ուրեմն, զեմստվային Հայաստանը տարածութեամբ եւ բնակիչների թուով երկու անգամ եւ դեռ աւելի մեծ պիտի լինէր, քան արդի Հայաստանը: Պատերազմի առաջին տարիներում, ուրեմն, այդ էր հայութեան ազգային– հողային հեռապատկերը Անդրկովկասում, ձեւակերպուած բաւական յստակ:

IX

Բաղդատութեան համար տեսնենք այժմ, թէ ո՞րն էր պատկերը պատերազմի նախօրէին, առանց ուրեմն նկատի ունենալու հայութեան՝ 1916-ին ձեւակերպուած հողային պահանջները: Միւս կողմից էլ վերյիշենք Հայաստանի քաղաքական անկախութեան օրերին (1918–1920) եղած դրութիւնը, վերջէն անցնելու համար Հայաստանի խորհրդայնացումից յետոյ ստեղծուած ու տակաւին շարունակուող վիճակին, թէ՛ ազգաբնակութեան թուի եւ թէ՛ ազգային– պետական տերրիտորիայի տեսակէտից:

Նախապատերազմեան շրջանի համար որպէս բաղդատութեան եղր դերադասելի է նկատի ունենալ 1914 թուականի վիճակագրական տուեալները: Դրանք ամփոփուած են «Կովկասեան Օրացոյց»ի մէջ:

Անցած յօդուածում մենք տեսանք, որ հայութեան ամբողջական թիւը Անդրկովկասում 1886-ին հաշուուում էր 939 հազար, 1897-ին 1 միլիոն 86 հազար, իսկ 1914-ին՝ 1 միլիոն 685 հազար: Այս վերջին տուեալի փոխարէն, (1914-ի համար), չգիտենք ինչ աղբիւրների հիման վրայ, հայ պատուիրակութեանց կողմից 1919 թ. փետր. 12-ին Փարիզի հաշուութեան խորհրդաժողովին ներկայացրած յուշագրի մէջ առաջ է բերուած 1,804,662, հա-

*) Վերոյիշեալ երեք աղիւսակների թուերը, թեթեւ սրբագրութիւններով, առնուած են Ա. Շախաթունեանի աշխատութիւնից: